

ՀԵՂՆԻԿ ՇՈՎՃԱՍՆԻՒԹՅԱՆ ԱՐԴԴ

«ՂԱՐԱԲԱԴԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆ», «ՂԱՐԱԲԱԴ», «ԼԵՂՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴ» ԱՆՎԱԼՈՒՄԵՐԻ ԴԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Վերջին շրջանում շատ հաճախ թե՝ առօրյայում և թե՝ մանուլում ու գիտական գրականության «Ղարաբադ» անվանումն օգտագործվում է որպես «Արցախ» անվան հոմանիշ, ինչն այնքան էլ ծիշտ չէ:

«Ղարաբադ» անունը սկսվել է օգտագործվել XIV դարից, որպես Արցախ և Ուտիք աշխարհների հավաքական անվանում: «Ղարաբադ» տեղանվան առաջին հիշատակություններից մեկը մենք հանդիպում ենք վրաց «Քարթլիս Ցխովրեբա»-ի այն աշխատության մեջ, որը պատմում է Գեորգի Լաշայի թագավորությունից (XIII սկիզբ) մինչև Գեորգի Պայծառի ժամանակը¹:

«Ղարաբադ» տեղանվանը մենք հանդիպում ենք նաև պարսիկ ժամանակագիր Ջամդալլահ Ղազվինիի «Ղավաքումն պատմություն» աշխատության մեջ, որը գրվել է XI դ. առաջին կեսին, իսկ հիշյալ տեղանունն էլ մտնում է 1334-1344 թթ. դեպքերը նկարագրող հատվածի մեջ: Բացի Ջամդալլահ Ղազվինիից «Ղարաբադ» տեղանվան նասին հիշատակում են XIV -XV դդ. պարսիկ այլ ժամանակագիրներ²:

Դայ պատմագիրներից «Ղարաբադ» տեղանունը հիշատակում է Թովմա Սեծոնփեցին: XVI դ. վերաբերող աղբյուրներից մեկում «Ղարաբադի» փոխարեն հիշատակված է «Սեաւ այգի»³: «Ղարաբադ» տեղանվան բացատրությունը լեզվաբանության մեջ տեղիք է տվել մի շարք բացատրությունների: Նախկինում տարածված է եղել այն տեսակետը, որ այս տեղանունը կազմված է թուրքերեն «կարա, դարա» (սկ) և

¹ Բ. Ուլուբարյան, Խաչենի իշխանությունը 10-14-րդ դարերում, Երևան, 1976 թ. էջ 40:

² Նույնի, էջ 41:

³ Մ. եպս. Բարխուդարյանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, Երևան, 1999 թ., էջ 160:

«բաղ» (այգի) արմատներից: Ըստ մի շարք հետազոտողների այն ծագել է պարսկական աշխարհագրական անվանակարգի հողի վրա. ի տարրերություն հարթավայրային մասի, որն անվանվում էր Բաղ-ի Սաֆիդ (Սպիտակ այգի) երկրամասի լեռնային մասն սկսել է անվանվել Բաղ-ի Միախ, որը թթվալեզվական իմաստավորմանք վերափոխվել է Կարարաղի (Սև այգի)¹: Ըստ Կովկասի տեղանուները ուսումնասիրող Կ. Գանի «կարա» արմատը նշանակում է նաև «թանձրախիտ», «մուգ կանաչ»²:

Ըստ Բ. Ուլուբարյանի՝ «կարա»-ի մեջ պետք է տեսնել ոչ միայն «սև» իմաստը, այլև այդ բառի երկրորդ շատ տարածված բովանդակությունը՝ «մեծ»:

ճիշտ է, «Ղարաբաղ» անվան ծագման վերաբերյալ գիտական բանավեճերը շարունակվում են և վերջնականորեն հաստատված կարծիք դեռևս գոյություն չունի, սակայն ակնհայտ է, որ այդ անվանումն օգտագործվում է զանազան փոփոխակներով: Հրապարակված գիտական պատմական գրականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «Ղարաբաղ» անվանումն օգտագործվում է հիմնականում երեք իմաստներով.

1. Լայն- այն ընդգրկում է Ղայկական բարձրավանդակի գրեթե ամբողջ հյուսիս-արևելյան հատվածը, որի հյուսիս-արևելյան սահմանը Կուր գետն է, իսկ հարավ-արևելքում՝ Արաքսի հովիտը: Ըստ Լեոյի. «Ղարաբաղը հաճապատասխանում է Մեծ Ղայի նահանգներից Ուտիքի մի մասին, ամբողջ Արցախին և Սյունիքի մեծագույն մասին...Ղարաբաղին կցված է և Միլի տափաստանը, որը կոչվում է և Ղարաբաղի տափաստան»³: Մահմեդական հեղինակներից Միրզա Զամալ Զևանչիրը նույնպես Ղարաբաղի սահմանները նշում է հիմնականում Լեոյի նշած սահմաններով. «Ինչպես գրված է հին պատմական աշխատություններում, Ղարաբաղի վիլայեթի սահմանները հետևյալներն են՝ Արաքս գետը, Խուդափերինի կամուրջից մինչև Կարմիր կամուրջը, արևելքից՝ Կուր գետը: Ղարաբաղի

¹ **П. М. Мурадян.** История-память поколений, Ереван, 1990, стр. 76.

² **К. Ган.** Опыт объяснений географических названий, Тифлис, 1909, стр. 70.

³ **Լեո.** Ղարաբաղ, Աթենք, 1990, էջ 7:

հյուսիսային սահմանը համարվում է Գերան (Կուրակ) գետը, արևմուտքից՝ Ղարաբաղի բարձր լեռները... »¹:

2. Միջին – ընդգրկում է Ղարաբաղի լեռնային մասը. մեծ մասմբ Խամսայի մելիքությունները, որոնց սահմանները, ըստ պատմական աղբյուրների, ծգվում է Արաքսից մինչև Կուր գետը: Ղարաբաղի լեռնային մասը ընդգրկում է Դիզակի, Վարանդայի, Խաչենի, Զրաբերդի և Գյուլիստանի մելիքությունները: Ուստի հայտնի ռազմական պատմաբան Վ.Պոտտոն Ղարաբաղի Լեռնային մասը համարում է Սյունիք²:
3. Նեղ - այն համապատասխանում է նախկին ԼՂԻՄ տարածքին: Սկսած 1923 թվականից, երբ կազմավորվեց ԼՂԻՄ-ը Լեռնային Ղարաբաղ, սկսեցին անվանել այդ վարչաքաղաքական միավորը, որը այնքան էլ ծիշտ չէ: Լեռնային Ղարաբաղ անվան տակ հասկացվում էր ավելի մեծ տարածք, քան ԼՂԻՄ-ը:

Փաստորեն, «Ղարաբաղի խանություն» և «Լեռնային Ղարաբաղ» հասկացությունների տակ պետք է նկատի ունենալ Ղարաբաղի որոշ հատվածը: Ըստ ուսւ հետազոտող Ի. Սեգալի՝ մինչև Ղարաբաղի խանության կազմավորումը Ղարաբաղի սահմաններն են Եղել հարավում՝ Արաքսը, արևելքում՝ Զավաք գյուղը, որի մոտակայքում՝ ղարաբաղյան լեռները: Ղարաբաղի խանության կազմավորումից հետո նրա մեջ մտնում էին հետագայի Զևանշիրի, Շուշիի, Զերրահիլի գավառները և Զանգեզուրի գավառի մի մասը: Ղարաբաղի հյուսիսային հատվածը մտնում էր Գանձակի խանության մեջ³:

Ղարաբաղի խանությունը կազմավորվել է Ղարաբաղի որոշակի հատվածում և նախապես ընդգրկել է իր մեջ Դաշտային Ղարաբաղի մի հատվածը և Շուշին: Ասել է, թե սկզբանապես Ղարաբաղի խանությունը ամենակին էլ այն տեսքը չի ունեցել, ինչպես ներկայացվում է մահմեդական պատմագրության մեջ:

Ինչպես արդեն նշել ենք, մահմեդական հեղինակները, մասնավորապես Միրզա Ջամալ Ջևանշիր, կամավորները, ներկայացնում են միևնույն սահմանները: Այսպիսով, ուշ միջնադարում Ղարաբաղի տարածքում գոյություն

¹ Мирза Джамал Джеваншир, История Карабахского ханства, Баку, 1961, стр. 63.

² Վ. Պոտտոն, Ղարաբաղի առաջին կամավորները, Երևան, 1974 թ., էջ 5:

³ З. И. Сегал, Елизаветпольская губерния (впечатления и воспоминания), "Кавказский вестник", 1902, стр. 66.

ունեին Ղարաբաղի և Գանձակի խանությունները:

Մակար Եպիսկոպոս Բարխուդարյանը Ղարաբաղը բաժանում է երեք մասի՝ Ղաշտային, Լեռնային և Յարավային կամ Ստորին, միջին և վերին: Ղաշտային կամ Ստորին գավառներն ընկած են Արաքս և Կուր գետերի, Աղստև գետի և Փոքր Կովկաս լեռնաշղթայի միջև: Լեռնային կամ Միջին գավառները ընկած են Փոքր և Մեծ լեռնաշղթաների և Զորագետի միջև տարածված մասի վրա: Յարավային կամ Վերին գավառները ընկած են Յակարի գետի ծախ ափերի Դիզափայտ և Քիրս լեռնաշղթաների հարավահայաց լանջերին¹:

Ղարաբաղի վարչատարածքային բաժանումների վերաբերյալ կարևոր աղբյուր է հանդիսանում Միրզա Յուսուֆ Ներսոսովի «ճշմարտացի պատմություն» աշխատությունը:

Նադիր շահի հրամանով ստեղծված Խամսայի մելիքությունների տարածքային բաժանման հարցերը հետաքրքրել են հայ ուսումնասիրողներից Ռաֆֆուն, Լեռյին և այլոց, որոնք ընդիանուր գծերով են նշում հայ մելիքությունների սահմանները: Ծիշտ է, այդ սահմանները երբեմն փոփոխվել են, սակայն XVIII դարում, ըստ Երևույթին, գյուղություն են ունեցել որոշակի սահմանագծեր, որոնցում ժողովուրդը առանձնացնում էր մելիքություններից յուրաքանչյուրը: Ներսոսովի «ճշմարտացի պատմություն» աշխատության շնորհիվ հնարավոր է դառնում ճգրտել XVIII դարի Խամսայի մելիքությունների սահմանները՝ իհմնականում համընկնելով Ռաֆֆու տվյալների հետ²: Դրանք որոշակիորեն են մտցնում Ղարաբաղի հայկական տարածքների հարցում, որը անտեսվել էր XIX դարի Արևելյան Այրեկովկասի վարչական բաժանումների ժամանակ: Խամսատությունը ցույց է տալիս նաև, որ խորհրդային իշխանության հաստատման տարիներին Աղբքեջանի ենթակայության տակ դրված ԼՂԻՄ-ը չէր ընդգրկում Ղարաբաղի հայկական տարածքները ամբողջությամբ: Նրա սահմաններից դուրս էին մնում ընդարձակ շրջաններ, որոնք, ինչպես երևում է Ներսոսովի վկայությունից, XVIII դարում պատկանում էին Խամսայի մելիքությունների հայարնակ տարածքների թվերին:

¹ Ա. եպս. Բարխուդարյանց, Աղուանից Երկիր և դրացիք, Արցախ, Երևան, 1999 թ., էջ 170:

² Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները, Երկեր, հ. X, Երևան, 1964 թ., էջ 124:

Ներսեսովի վկայությամբ Դիզակի մելիքությունը (մահալը) ձգվում էր արևոտքից դեպի արևելք Հագարի (Աղավնու) գետից մինչև Քյոնդալան գետը, հարավում՝ Արաքս գետից մինչև Քիրս լեռնաշղթամ¹: Վարանդայի հարավային և արևմտյան սահմանն էր կազմում Քիրսի լեռնաշղթան, արևելյան՝ Ալի Բալի հովիտը, հյուսիսային՝ Կարկառի հարավային վտակները²: Խաչենի մելիքությունը (մահալը) «ճշմարտացի պատմությունում» ներկայացված է հետևյալ սահմաններում. հյուսիսային և հարավային սահմաններն էին կազմում Կարկառ և Ղարաբը գետերը: Արևմտյան սահմանը ձգվում էր Ղարաբաղյան լեռնաշղթայի (Միխտության) երկայնքով, իսկ արևելքում այն եզերում էր Բայարի՝ նախկինում անտառային, իսկ այժմ ետանտառային մարգագետնային գոտիին³:

Զրաբերդի արևելյան և արևմտյան սահմաններ էին կազմում նորից Ղարաբաղյան լեռնաշղթան ու Բայարի անտառը, այս անգամ իրենց հյուսիսային հատվածներով, իսկ հյուսիսային ու հարավային սահմաններն էին թարթառ և Ղարաբթու գետերը⁴: Խամսայի մելիքության (մահալ) սահմաններն էին կազմում Մռով ու Գյուլիստան լեռները և Կուր, Կուրակ ու Թարթառ գետերը⁵:

Այսպիսով, Ղարաբաղի խանությունը ընդգրկել է Կուր - Արաքսյան Միջագետքի հարավային և հարավ - արևելյան հատվածը Գանձակի և Շաքիի խանություններից հարավ և զբաղեցրել է 13 հազար քառ. վերստ⁶: Ըստ Վարչատարածքային բաժանման՝ Ղարաբաղի խանությունը բաղկացած էր 21 վարչական միավորից, որոնք կոչվում էին նահալներ: Խանության կազմի մեջ էր մտնում նաև Կապան-Զանգեզուրի շրջանը: Ղարաբաղի խանության մահալներն էին Սիսիանի, Կապանի, Դեմուրչիասանլիի, Բաղաբերդի, Խուրդափարայի, Աշնանի, Զավանշիրի, Թալիշի, Խաչենի, Մեղրու, Վարանդայի, Փիսիանի և այլն⁷:

¹ Միրզա Յուսուֆ Ներսեսով, ճշմարտացի պատմություն, Երևան, 2000 թ., էջ 40:

² Նույնի, էջ 41:

³ Միրզա Յուսուֆ Ներսեսով, ճշմարտացի պատմություն, էջ 42:

⁴ Նույն տեղում, էջ 43:

⁵ Նույն տեղում, էջ 43:

⁶ Иваненко В. Н., Гражданское управление Закавказье (от присоединения Грузии до наместничества великого князя М. Николаевича), Тифлис, 1901, стр 146.

⁷ Րայ Ժողովրդի պատմություն, հ. V, Երևան, 1974 թ., էջ 15:

Ոուսական աղբյուրներում, բացի մահալներից, նշված են նաև այն կալվածքները, որոնք պատկանում էին խանին և նրա հավատարիմ մարդկանց: Այսպես, բացի մահալներից, կային նաև հետևյալ կալվածքները՝ խանական ընտանիքին, Գյուլ-մամեդ բեկին, Ուզուրլա բեկին, Խանակի բեկին, Հաջի Աղալար բեկի, Սաֆար Ալի բեկին, Խանլար աղային, Ոուստան բեկին, Ասադ բեկին պատկանող¹: Ղարաբաղի խանությունը, որը ծագել էր միայն 1747 թ. հետո թաթարական խառը ցեղերից, որոնք հնազանդություն հայտնեցին Զեանշիր ցեղի Սարջալլու տոհմի Փանահին, որը օգտվելով «Պարսկաստանում տիրող խառնաշփոթ իրավիճակից իրեն հայտարարեց խան²:

Այսպիսով, Ղարաբաղի խանությունը պետք է դիտարկել որպես մի ամբողջական էթնոքաղաքական կազմակերպություն, կոնկրետ էթնոպատմական դրություն: Ղարաբաղի խանությունը երբեք չի եղել զուտ մահմեդական խանություն, ինչպես փորձում են ներկայացնել որոշ «վայ» պատմաբաններ հարևան հանրապետությունից: Ղարաբաղի խանությունում հայ բնակչությունը միշտ գերակշռել է:

¹ Акты Кавказского Архиографической комиссии, том VII, док. 1302.

² Иваненко В. Н., Гражданское управление Закавказье, СПб, 1900, стр 148.